Ուսումնական/Մագիստրոսական կրթաթոշակներ բուհավարտների համար (ուշադրություն՝ փոփոխված ընթացակարգ)

Նպատակը

- Կրթաթոշակներն արտասահմանցի բուհավարտներին հնարավորություն են տալիս մասնակցել որակավորման բարձրացման կամ մագիստրոսական դասընթացներին գերմանական որևէ բուհում և ստանալ մագիստրոսի աստիճան կամ ավարտական դիպլոմ:

Տևողությունը

- Կրթաթոշակի տևողությունը, կախված ընտրված դասընթացի տևողությունից և դիմորդի ուսման նպատակներից, կարող է լինել 10-ից 24 ամիս: Բոլոր կրթաթոշակները սկզբում տրամադրվում են մեկ ակադեմիական տարվա համար և հետագայում հայցադիմում ներկայացնելու դեպքում ցուցաբերված բարձր առաջադիմության հիման վրա կարող են երկարացվել՝ համաձայն դասընթացի ընդհանուր տևողության:

Կրթաթոշակային վճարումներ

- DAAD-ն վճարում է ամսական կրթաթոշակը 750 եվրոյի չափով, ճանապարհածախսը և ուղեբեռի համար վճարումները, ինչպես նաև ստանձնում է բժշկական ապահովագրության ծախսերի զգալի մասը:

Դիմելու համար անհրաժեշտ պայմանները

- DAAD-ի ուսումնական կրթաթոշակի համար կարող են դիմել ուսման մեջ բարձր առաջադիմություն ցուցաբերած բոլոր այն անձինք, ովքեր ամենաուշը կրթաթոշակը սկսվելու պահին կունենան բարձրագույն կրթության վկայական (բակալավր, դիպլոմ կամ այլ ակադեմիական աստիճան): Դիմելու պահին դիմորդը պետք է որպես կանոն բուհը ավարտած չլինի ավելի քան 6 տարի առաջ:
- Բացի ուսման մեջ ցուցաբերած առաջադիմությունից, ընտրության համար կարևոր չափանիշ է Գերմանիայում կրթությունը շարունակելու համար մասնագիտական և անձնական դրդապատճառների համոզիչ շարադրանքը:
- Լեզվական գիտելիքներ© դիմելու պահին բոլոր դիմորդները պետք է համապատասխան լեզվական իմացություն ունենան: Անգլերեն լեզվով դասավանդվող կուրսերին մասնակցելու համար դիմորդները պետք է բավարար չափով տիրապետեն անգլերեն լեզվին, ինչի համար պետք է ներկայացնել TOEFL-թեստի վկայականը կամ այն համապատասխան վկայականը, որը պահանջում է տվյալ բուհը: Գերմաներեն լեզվով դասավանդվող կուրսերին մասնակցելու համար դիմորդը պետք է ներկայացնեի գերմաներեն լեզվի համապատասխան վկայականը:

Եթե դասընթացը անց է կացվում երկու լեզվով էլ, ապա համապատասխանաբար պետք է ներկայացնել և գերմաներնի, և անգլերենի իմացության վկայականները:

- Դիմորդները, որոնք դիմելու պահին մեկ տարուց ավել ուսանել են Գերմանիայում, չեն կարող դիմել ծրագրին:

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը՝

Դիմումի ձև ներկայցվում է on-line – տարբերակով, **MOVE**-համակարգով (www.funding-guide.de)

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել նաև թղթային տարբերակով՝ երեք օրինակից :

- Դիմումի ձև՝ www.funding-guide.de, MOVE-համակարգով, գրանցվելուց և դիմումաձևը լրացնելուց հետո պետք է վերբեռնել բոլոր անհրաեշտ փաստաթղթերը, որոնք ներկայացված են ստորև: Մանրամասները նայել DAAD հայաստանյան կայք-էջում
- Կենսագրություն (CV)
- Գերմանիայում սովորելու համար հիմնավորում
- Տեղեկություն ընտրված կուրսի մասին (օր.՝ Ինտերնետից ընտրված հատված հետևյալ տվյալներով. ծրագրի սկսելու ժամկետը, տևողությունը, դասավանդման լեզուն, ուսման վճարները, դիմելու համար անհրաժեշտ պայմանները, դիմելու ժամկետները, հասցեն): Այս տվյալները դիմորդները պետք է լրացնեն DAAD-ի ինտերնետային կայքում տեղակայված համապատասխան հայցադիմումի վրա:
- Մասնագետ-դասախոսի կողմից տրված 1 երաշխավորագիր՝ լրացված համապասխան DAAD բլանկի վրա
- Հասունության վկայականի (ատեստատ) պատճենը և թարգմանությունը
- Դիպլոմի կամ բակալավրի կամ մագիստրոսի դիպլոմի պատճեն և թարգմանությունը/ավարտական կուրսի ուսանողները ներկայացնում են ստուգման գրքույկի պատճենը և թարգմանությունը կամ ակադեմիական տեղեկանք, որտեղ ներկայացված են առարկաններն և դիմորդի ուսումնական առաջադիմությունը
- Գերմաներեն կամ անգլերեն լեզվի իմացության վկայական (On DaF, Test DaF, DSD, DSH, ինչպես նաև Գյոթե ինստիտուտի կողմից ճանաչված համապատասխան վկայականները): Անգլիալեզու դասընթացների համար համապատասխան վկայականները, որոնք պահանջում է տվյալ բուհը – Toefl, GRE, GMAT և այլն:

Համապատասխան վկայականները պետք է վերբեռնել միայն նշված վերնագրի տակ:

Երաշ;ավորագիր նամակները խնդրում ենք չվերբեռնել: Նրանք պետք է հանձնել DAAD երևանյան գրասենյակ փակ ծրարով:

Բոլոր փաստաթղթենը վերբեռնելուց հետո Դուք կստանաք Ձեր փաստաթղթերի ամբողջական տարբերակը՝ pdf ֆայլի տեսքով: Այն պետք է տպել 3 օրինակից և հանձնել DAAD երևանյան գրասենյակ:

Բոլոր փաստաթղթերը պետք է հանձնել առանց ամրակների, միակողմանի տպված:

Լրացուցիչ փաստաթղթեր չեն ընդունվում և խնդրում ենք նաև չվերբեռնել:

Կրթաթոշակը կարող է սկսվել դիմումին հաջորդող տարվա հոկտեմբերի 1-ից:

DAAD-ի Բոնի գրասենյակին ուղիղ հասցեագրված դիմումները չեն կարող դիտարկվել:

Գերմանիայում ուսման հնարավորությունների մասին համապատասխան ինֆորմացիա կարելի է գտնել նաև հետևյալ ինտերնետային կայքում՝ www.study-in.de, www.daad.de/international-programmes

Դիմումներն ընդունվում են մինչև սույն թվականի նոյեմբերի 5-ը:

Գերմաներեն լեզվի քննությունը տեղի կունենա նոյեմբեր ամսին փաստաթղթերի հանձնումից հետո:

DAAD տեղեկատվական կենտրոն

Սարմենի 82, 0019 Երևան * Հեռ.՝ +37410/ 58 25 15 * E-Mail: info@daad.am